


ՊՐՈՖ. Ն. Ս. ՍՈԿՈԼՈՎ



**ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ
ՆԱԽՈՐՅԱԿԻՆ**

338.1

U-68

01.08.2013

30.000/8
 37-11
 693
 338.1
 U-68

БИБЛИОТЕКА
 СИНТАТА
 ВУКОВИЧЕВЕНА
 Академии Наук
 СССР

17 FEB 2010

ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՍՅԱԿԻ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ *)

Սոցիալիզմի հաղթական կառուցումը ԽՍՀՄ-ում արդեն իսկ առաջին հնգամյակի վերջում, վերը հնարավոր յեղով իրականացնել 4 տարում, ԽՍՀՄ-ին հնարավորություն տվեց ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցումն ավարտելու համար սեփական բազա, այսինքն՝ սոցիալիստական մեքենայական ինդուստրիայի բազա ստեղծել: Կառակցության XVII կոնֆերենցիան արձանագրեց, վեր ԽՍՀՄ «մանր և մանրագույն հողագործական յերկրից» վեր և ամփել «աշխարհի մեջ ամենախոշոր հողագործական յերկրի կոլեկտիվացման, խորնտնտեսությունների և կոլտնտեսությունների ծավալման և մեքենայական տեխնիկայի լայն գործադրման հիման վրա»: Սոցիալիստական շինարարության այս հաջողությունները ձեռք բերվեցին շնորհիվ բանվորների և աշխատավոր գյուղացիների ամենալայն մասսաների ակտիվության վիթխարի աճման, շնորհիվ մեր կառակցություն լինինյան քաղաքականության, շնորհիվ կապիտալիստական տարրերի վրա հետևողական և ծավալուն հարձակում գործելուն, շնորհիվ աջ և «ձախ» ուղորտունիքի և դրա հետ ամեն տեսակ հաշտվողականության դեմ անհաշտ և վճռական պայքար մղելուն:

Յերկրորդ հնգամյակը ԽՍՀՄ-ին առաջադրում և մի վիթխարի խնդիր, այն և՛ «կապիտալիստական տարրերը և ընդհանրապես դասակարգը վերջնականորեն լիկվիդացիայի յենթարկելու և դասակարգային տարրերություններն առաջացնող պատճառները լիակատար վոչնչացնելու» խնդիրը: Յերկրորդ հնգամյակի ընթացքում ամբողջ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման ավարտումը հանդիսանում և հիմնական և վրճողական տնտեսական խնդիր:

Սոցիալիստական տնտեսության արտադրողական ուժերի վիթխարի ծավալումը, սոցիալիստական արդյունաբերության աճման տեմպերը գյուղատնտեսությանն առաջադրում են իր սո-

*) Արտատպություն «Դաշտավարության» դասագրքի համանուն գլխից: Ծան. հր.

ցիալիստական վերակառուցումն ավարտելու խնդիրը: Յերկրորդ հնգամյակում ՄՏ կայանները պետք է ընդգրկեն բոլոր կոլտնտեսությունները և հիմնականում ավարտեն գյուղատնտեսություն մեքենայացումը:

Կոլտնտեսությունները և խորհրտնտեսությունները կազմակերպչական—տնտեսական տեսակետից ամրապնդելը և մեքենայական տեխնիկայով զինելը, գյուղատնտեսական աշխատանքն ավելի ու ավելի ինդուստրիալ աշխատանքի տարատեսակի վերածելը, արդյունաբերություն և գյուղատնտեսություն միջև սրանսպորտային կապի և ապրանքաշրջանառություն ուժեղացումն ու ամրապնդումը,—այս բոլորը պիտի պայմաններ ստեղծեն գյուղի և քաղաքի միջև գոյություն ունեցող հակադրությունն ամբողջովին վերացնելու համար:

Յերկրորդ հնգամյակի խնդիրներից մեկը «խորհրտնտեսական և կոլտնտեսական դաշտերի բերքատվության վճռաձևի բարձրացումն է»:

Այս խնդրի հետ անմիջականորեն կապված է կուսակցական XVII կոնֆերենցիայի այն վորդումների բերքատվությունը, վորոնք վերաբերում են յերկրորդ հնգամյակում անասնապահական պրոբլեմը լուծելուն, տեխնիկական կուլտուրաների աճման ապահովության (բամբակի և վուշի ընդհանուր արտադրանքի կրկնապատկումը, իսկ ճակնդեղինը՝ յեռապատկում) և հացահատիկային արտադրանքը 1.300 միլիոն ցենտների հասցնելուն:

Բերքատվության բարձրացումն պահրածեղտ է նաև այն բանի համար, վոր յերկրորդ հնգամյակի վերջում բնակչությանը սննդամթերքներ մատակարարվի 2—3 անգամ ավելի մեծ չափով, քան առաջին հնգամյակի վերջում:

Այս խնդիրները, վոր ճշտորոշ դրել է մեր կուսակցության XVII կոնֆերենցիան, պետք է զտոնան այն բոլոր ձեռնարկումների կետ նպատակը, վորոնք բարձրացնելու յեն սոցիալիստական հողագործության արտադրողականությունը:

1932 թվի սեպտեմբերի 30-ին ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհը և Համ. Կ. (բ.) Կ. Կ. Կ. ընդունել են բերքատվության բարձրացման ձեռնարկումների մասին պատմական վորոշում, վոր մատնանշում է, թե հասել է ժամանակը, յերբ փոխանակ ցանքսի տարածություններն ավելացնելու յեղանակով տնտեսություններ լայնացնելու՝ անհրաժեշտ է պայքարել հողի լավագույն մշակման

համար, պայքարել բերքատվության բարձրացման համար, վորպես գյուղատնտեսություն բնագավառում գլխավոր և կենտրոնական խնդրի՝ զարգացման ավյալ ստադիայում»:

Հողագործությունը—բուսական պարենի և արդյունաբերական հումքի և կերի արտադրությունը—կապիտալիստական հասարակարգի պայմաններում ժողովրդական տնտեսության ամենահեռամասց ճյուղն է հանդիսանում: Հողագործության մեջ ավելի մեծ չափով, քան տնտեսական վորքես այլ ճյուղի մեջ, պահպանվում էլին տեխնիկայի անդրճեղեղյան հետամնաց ձևերը: Դեռ Մարքսն ասում էր, վոր «ագրոկուլտուրայի և նրա վրա հիմնված սեփականատիրական խողություն բարենորոգումն ապագա հեղաշրջման ալֆան և ոմեգան պիտի դառնա»:

Սոցիալիզմի կառուցման մեր եպոխան իրագործում է Մեծ տեսաբանի և պրակտիկ հեղափոխականի այս կանխատվումը, և դաշտավարության պրակտիկ հարցերի մշակմանն անցնելիս՝ մեզ համար կարևոր է միանգամայն հայտնի կացուցել հողագործության զարգացման ուղիները սոցիալիզմի շինարարության յերկրորդ հնգամյակի նախորդակին:

Ամենից առաջ մենք պետք է պարզ պատկերացնենք, վոր ժողովրդական տնտեսության զարգացման մեջ ինդուստրիայի առաջատար դերն ամբողջովին յերևան է գալիս նաև հողագործության զարգացման մեջ:

Անհրաժեշտ է վճռականորեն մերժել դեռ այժմ ել գյուղատնտեսական զրականության մեջ յերբեմն պատահող խոսակցություններն այն մասին, թե գյուղատնտեսության մեջ կիրառելի չեն արդյունաբերության զարգացման որենքները, թե դրա մեջ տեխնիկան վճռական դեր չի խաղում և այլն:

Այս հայացքներն իր ժամանակին փայլուն կերպով հերքել են Մարքսը և Լենինը և ապացուցել, թե գյուղատնտեսության հետամնացությունը, նրա մեջ տեխնիկայի ավելի դանդաղ թափանցումը և այլն բոլորովին արդյունք չեն այն բանի, վոր գյուղատնտեսությունը հատուկ «բնույթ» ունի, այլ հետևանք են սոցիալ-տնտեսական վորոշ պայմանների, վորոնցով բնորոշվում է կապիտալիստական հասարակարգը, հետևանք են հողի և արտադրության միջոցների սեփականատիրության, հետևանք են այն բանի, վոր «կապիտալիստական հողագործության ամեն մի առաջադիմությունը վոշ միայն բանվորին կողոպուտի յինթարկելու արվեստի, այլ և հողը կողոպուտելու արվեստի առաջադիմություն է, հողի բերքատվության ժամանակավոր բարձ-



56004-66

բացման ամեն մի առաջադիմութիւն միեւնոյն ժամանակ այդ բերքատուութեան մշտական աղբյուրների խորտակման առաջադիմութիւնն է» (Մարքս):

Սոցիալիստական հասարակութեան պայմաններում վերանորոգում են հողագործութիւնը սոցիալիստական ինդուստրիայի ըստեղծած տեխնիկական նոր բազայի վրա գիտականորեն վերակառուցելու բոլոր արգելքները, գյուղատնտեսութեան մեջ մարդու աշխատանքի և կենդանու քարշի փոխարինումը մեքենայի աշխատանքով (գյուղատնտեսութեան մեքենայացումը), քիմիական արդյունաբերութեան մեջ պատրաստված արդյունքների ոգտագործումը բույսերին սնունդ մատակարարելու, հողի հատկութիւնները բարելավելու, բույսերի հիվանդութիւնների և վնասատուների դեմ պայքարելու համար (գյուղատնտեսութեան քիմիացումը), վիթխարի կառուցումները, վորոնք պիտի ջուր տան պտղաբեր, բայց անջրդի հողերին և դրանով հենց բայլելիորեն լուծեն յերաշտի դեմ պայքարելու խնդիրը (վորոգումը)—ահա տեխնիկական այն նոր բազան, վորի վրա պիտի կառուցվի սոցիալիստական հողագործութիւնը:

Հողագործութեան առաջ լայնագոյն հեռանկարներ և բաց անում նաև գյուղատնտեսութեան ելիկտրիֆիկացիան: «Գյուղատնտեսութեան մեջ ելիկտրականութեան աստիճանական արմատավորումը» յերկրորդ հնգամյակի ընթացքում և հետագայում հողագործութեան տեխնիկայի մեջ այնպիսի տեղաշարժութիւններ առաջ կբերի, վորոնց մասին դժվար է այժմ անգամ մոտավոր գաղափար ունենալ:

Խորհրդային հողագործութեան զարգացումը հիմնովին հերքեց և բաց արեց հակահեղափոխական Մակարովների, Չայսնովների, Դոյարենկոնների և ուրիշների «գիտական» այն տեսութիւնների վնասակար բնույթը, թե «յեզը արակտորից շահավետ է», թե «բերքատուութեան աճումը մեխանիզացիայից չի կախված», թե բերքատուութիւնը բարձրացնելու համար պետք է ընթանայ վնչ թե յերկրի ինդուստրացման և խորհրդային ու կոլեկտիվ տնտեսութիւնների կառուցման ուղիով, այլ պետք է աշակցել կուլակային տնտեսութիւններին, վոր նրանք կիրառեն իրենց մատչելի ագրոտեխնիկական ձեռնարկումները:

Խոսելով այն մասին, թե սոցիալիստական ինդուստրիան և գյուղատնտեսութեան նոր սոցիալական ձևերը ԽՍՀՄ-ի մեջ ըստեղծեցին բերքատուութեան աճման այնպիսի հնարավորութիւններ, վոր աշխարհը յերեք չի տեսել, չպետք է մոռացութեան տալ և այն, վոր մեզ վրա ընկնում է այդ հնարավորութիւններն, իրականացնելու պատասխանատու խնդիրը:

Այս խնդիրը մենք կարող ենք իրագործել միայն այն դեպքում, յեթե մենք լրջորեն, ինչպես հարկն է, տիրապետենք ագրոտեխնիկային:

Գործնականում մենք հաճախ հանդիպում ենք ագրոտեխնիկայի թերագնահատման, թերագնահատում, վոր հաճախ կապված է ագրոտեխնիկան մեխանիզացիային հակադրելու «ձախ» ցատկատումներին հետ, այն խոսակցութիւնների հետ, թե մեխանիզացիայի և քիմիզացիայի ժամանակ ագրոտեխնիկա պետք չէ: Իսկ հաճախ ել այս թերագնահատումը կապված է թունդ ուղրտունիդի հետ, նոր ձևով աշխատել չցանկալու և չկարողանալու հետ: Այս բոլոր տրամադրութիւնները լայն չափով ոգտագործում է կուլակը, վորն աշխատում է քայքայել կոլտնտեսութիւնները:

Այս խնդրում բավարար պարզորոշութիւն է հարկավոր: Մենք դեռ չենք կարողանում ֆարրիկայում և գործարանում պատրաստել որգանական այն նյութը, վոր բույսն է ստեղծում արեգակի եներգիան ոգտագործելով: Հողագործութեան մեջ մենք բույսերն ոգտագործում ենք վորպես արեգակի եներգիայի ակուուլյատոր, ոգտագործում ենք հողը, վորից բույսը սնունդ և ջուր է վերցնում, ոգտագործում ենք կլիմայական այն պայմանները, վորոնցում աճում է բույսը:

Դիտութիւնը և տեխնիկան մեր ձեռքը բնութիւնը ձևափոխելու զենք են տալիս, բայց բնութիւնը ձևափոխելու համար մենք պետք է գիտենանք նրա որինաչափութիւնները:

Ագրոտեխնիկան հիմնովիւ բույսի կյանքի որինաչափութիւնները, հողային և կլիմայական պայմանները և այլն ուսումնասիրելու վրա՝ ցուցումներ և տալիս այն մասին, թե ինչպես պիտի գործադրել մեքենաները, պարարտանյութերը և այլն, վորպեսզի դրանց կիրառումից առավելագոյն արտադրողականութիւն ստացվի: Շատ լավ մեքենաներ ունենալով հանդերձ կարելի չէ բոլորովին բերք չստանալ, յեթե մարդ չիմանա, թե յերբ պետք է վարել և ցանել, և յեթե չպահպանվեն հարկ յեղած ժամկետները: Կարելի չէ շատ լավ պարարտանյութեր ունենալ, բայց դրանց անոգուտ գործադրել, յեթե մարդ չիմանա, թե դրանք ինչ հողերի և ինչպիսի կուլտուրաների պիտի տար: Այս բոլոր ցուցումները տալիս է ագրոտեխնիկան: Ագրոտեխնիկան չիմանալու դեպքում, մարդ չի կարող ճիշտ ոգտագործել իր տրամադրութեան տակ գտնվող հնարավորութիւնները:

Կուսակցութեան XVII կոնֆերենցիան պարզ ընդգծում է,

Թե անհրաժեշտ է գյուղատնտեսության մեջ կիրառել ժամանակակից ագրոնոմիայի բոլոր նվաճումները: Յեթե առաջ ագրոնոմիական տեսությունը կտրված էր պրակտիկայից, ապա մեր պայմաններում նա «պիտի պրակտիկներին տա կողմնորոշման ուժ, հեռանկարների պարզություն, աշխատանքի վստահություն և հավատ, վոր մեր գործը հաղթանակելու յե» (Ստալին):

Կուսակցության Կենտկոմի և Միութենական Ժողկոմխորհի վերոհիշյալ վորոշումը հանձնարարում է ԽՍՀՄ-ի Հողօրհրդամատին և Տրակտորկենտրոնին «ՄՏԿայանների աշխատանքն այնպես վերակառուցել, վոր բերքատվության համար մղվող պայքարի խնդրին յենթադրվի ՄՏԿ-ի աղբո-արտադրական ընթացիկ աշխատանքը, նկատի ունենալով, վոր ՄՏԿ-ները պետք է կոլտնտեսությունների դեկավարը դառնան վոչ միայն տրակտորային տեխնիկայի գործադրման ասպարիզում, այլև ագրոնոմիայի բնագավառում»:

Ագրոնոմիայի նվաճումներին տիրապետելու և յուրաքանչյուր կոնկրետ կոլտնտեսության մեջ այդ նվաճումները կենսապորձելու համար մղվող պայքարը կոլտնտեսական ակտիվի և բոլոր կոլտնտեսականների քաղաքական կարևորագույն խնդրն է, կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման գործի մի մասն է:

Սակայն արդյժք մենք կարող ենք մեր և արտասահմանյան ագրոնոմիայի բոլոր նվաճումներն առանց քննադատական վերադնահատման յենթարկելու՝ վերցնել և կիրառել: Իհարկե, վոչ-Բանն այն է, վոր ագրոտեխնիկան ամենասերտ կերպով կապված է տնտեսության բոլոր կազմակերպչական պայմանների, նրա սոցիալիստական-տնտեսական բնույթի, տեխնիկական զինվածության չափերի հետ և այլն:

Վերականգնման ժամանակաշրջանի մեր նախկին ագրոտեխնիկան հիմնականում ի նկատի ուներ անհատական տնտեսությունը: Սպիտակ գլարդիական կազմակերպությունների հետ կապված վնասարարները (Չայանովը, Դոյարենկոն և ուրիշները) ձգտում էին ագրոտեխնիկան դարձացնել կուլակային տնտեսության պահանջների ուղղությամբ: Նրանք ջանք եյին թափում ագրոտեխնիկան մի միջոց դարձնել նրանց սրտին այնքան մոտիկ այն կուլակային տնտեսությունն ամրապնդելու համար, վորի մեջ միայն պրիմիտիվ մեքենաներ և գործիքներ եյին կիրառում, վորին անձանոթ եյին հանքային պարարտանյութերը:

Այդ ագրոտեխնիկան վոչ մի կերպ չէր հարմարվի մեքե-

նայացված տնտեսության պահանջներին: Ցանքաշրջանառություններ կազմելու բնագավառում նա ուղեցույց էր ընդունում վոչ թե սպեցիալիզացիան, այլ ունիվերսալիզմը և մարդու աշխատանքն և հողն ըստ կարելույն ավելի մեծ չափով շահագործելու ձգտումը: Ցանքաշրջանառության վրա նալում եյին վորպես առավելագույն շահույթ ստանալու մի մեթոդի վրա:

Նոր, մեր դաշտերի վրա դեռ չտեսնված մեքենաների գործադրումը, ինչպիսին կոմբայներն են, վորոնց մասին նախկին ձեռնարկների մեջ վոչ մի տող չէր գրվում, կոլտնտեսական-խորհտնտեսական շինարարության ծավալումը յերևան հանեց, վոր ագրոնոմիական տեսությունը հսկայական չափով հետ է մնում պրակտիկայից, վորի պատճառով և դրանք հաճախ խզվում են իրարից: Այսպես, որինակ՝ ցորենի այն սորտերը, վորոնք հարմար եյին ձեռքով բերքահավաք կատարելու համար, դուրս յեկավ, վոր չեն կարող կոմբայներով հնձվել և կալավել: Շարքահերկ բույսերի մշակության նկատմամբ պարզվեց, վոր միջշարքային այնպիսի հեռավորություններ պիտի վերցնել, վոր հեռարավոր լինի արտը տրակտորով մշակել:

Ագրոտեխնիկայի հիմունքների վերակառուցման այս անհրաժեշտությունն առանձին, յերբեմն շատ խոշոր գիտնականներ, հաճախ պարզորոշ չեն գիտակցում: Այսպես որինակ՝ Դ. Պլյանիչ-նիկովի 1931 թվին լույս տեսած «Частное земледелие» ձեռնարկում (համարյա 900 յերես) մանրամասն նկարագրված են հացահատիկները հավաքելու և՛ ձեռքով, և՛ ձիան ամրակներով և այլն կալսելու բոլոր ձևերը: Իսկ հացահատիկների բերքահավաքը կոմբայներով կատարելու մասին ասված է միայն, վոր «հացահատիկային խոշոր տնտեսությունների մեջ չոր կլիմայի պայմաններում կարելի յե բերքահավաքի կոմբայնացված մեքենաներ գործադրել, վորոնք վոչ միայն հնձում, այլ տեղյն ու տեղը կալսում են հացը»: Պարզ է, վոր այսպիսի տեսությունը չի կարող առաջատար հանդիսանալ պրակտիկայի համար, յեթե նա ինքը չվերակառուցվի, լայն չափերով ոգտագործելով այն փորձը, վոր արդեն մենք ունենք կոմբայնի գործադրման նկատմամբ մեր կոլտնտեսական և խորհտնտեսական դաշտերում:

Պետք է ընդգծել նաև, վոր ագրոտեխնիկայի մեջ անցյալում մեծ չափով տարածված եյին բերքատվության բարձրացման գործում հանքային պարարտանյութերի հսկայական դերը բացասող «տնտեսությունները»: Այսպես՝ դարձյալ նույն Դոյարենկոն իր փորձնական դաշտում 36-ական տոնն գոմայր մտցնելով յե-

ազգաշտի մեջ և այս ֆոնի վրա ուսումնասիրելով հողի մշակութունը (մասնավորապես մաքուր ցելերը), հետո ապացուցում եր, թե հողի մշակութունն իբր թե ընդհանուր առմամբ կարող է փոխարինել հանքային պարարտանյութերին, քանի վոր մաքուր ցելն ավելի ազոտ է ամբարում, քան այդ կարելի չե տալ հանքային պարարտանյութերով: Այն, վոր դա գոմաղբի միջոցով հողին աված ազոտն է, այս մասին նա համեմատորեն լուծություն եր պահպանում:

«Անցյալի այս բոլոր արձագանքներն» այժմ ել յերեմն սոցոսվում են գրականության մեջ և դրանց դեմ պիտի ամենավճուղան պայքար մղել:

Սոցիալիստական հողագործության ազրոտեխնիկայից մենք պահանջում ենք ապահովել մեր դաշտերի բերքատվության առավելագույն բարձրացումը, ապահովել սոցիալիստական հողագործության արտադրողականության առավելագույն աճումը: Բերքատվության աճման տեմպերի հարցը լուծելիս՝ պետք է վրձնական պայքար մղել բուրժուական և մանր բուրժուական տարբեր «տեսությունների» կցման դեմ: Ամենից հաճախ այս տեսությունները կապված են լինում այսպես կոչված «նվազող պտղաբերության որենքի հետ»:

Բուրժուական տնտեսագետները, կապիտալիստական հողագործության կրիդիաների սոցիալական պատճառները, նրա զարգացման դանդաղած տեմպերն սքողելու համար՝ ստեղծել են այսպես կոչված «նվազող պտղաբերության որենքը», վորը վորպես «մշտնջենական» «բնական որենք» պետք է «բացատրեր» այդ յերեմվութիւնների պատճառը: Այս «որենքի» համաձայն հողագործության մեջ ընդհանրապես աշխատանքի կամ կապիտալի յուրաքանչյուր հաջորդ ներդրումը նվազ եֆեկտ է տալիս, քան նախորդ ներդրումը:

Ազրոտմիական մի քանի գիտնականներ փորձեցին այս որենքը հիմնավորել փորձնականորեն, բերքատվության բարձրացման առանձին կոնկրետ ձեռնարկումների վրա (պարարտացում, հողի մշակութուն):

Լենինը մերկացրեց այս որենքի կողմնակիցների սխալը: Այդ այն եր, վոր նրանք աշխատանքի և կապիտալի հավելյալ ներդրումների հավելումներն անալիզի եյին յենթարկում անփոփոխ տեխնիկայի և արտադրողական ուժերի միևնույն մակարդակի շրջանակներում: Բայց «չե վոր աշխատանքի և կապիտալի հավելյալ կամ հաջորդական ներդրումներ» գաղափարն ինքն արտա-

դրության յեղանակների փոփոխություն, տեխնիկայի ձևափոխություն ե յենթադրում: Հողի մեջ ներդրված կապիտալի քանակը զգալի չափերով ավելացնելու համար պետք է հնարել նոր մեքենաներ, գաշտավարության նոր սիստեմներ, տավար պահելու, մթերքներ փոխադրելու նոր յեղանակներ և այլն, և այլն»:

Աշխատանքի և կապիտալի հավելյալ ներդրումների առաջ առանձին մոմենտներում սահմաններ ե դնում վոչ թե գյուղատնտեսության բնույթը, այլ տեխնիկայի մեջ առաջադիմության բացակայությունը և արտադրողական ուժերի աճման դանդաղումը, վորոնք պայմանավորվում են վորոշ սոցիալ-տնտեսական պայմաններով: Սոսկելով Ռուսաստանի մինչև հեղափոխությունն ունեցող գյուղատնտեսության մասին, Լենինը նրա մակարդակը հետևյալ կերպ ե բնորոշում. «Յեռադաշտ, ավանդական հացահատիկների ցանքս, գոմաղբային անասնապահություն, բարեկամ մարգագետինների և կատարելագործված գործիքների բացակայություն»:

Այսպիսի կացությունը, «այս տվյալների անփոփոխության պայմաններում», «աշխատանքի և կապիտալի հավելյալ ներդրումների շրջանակը ծայր աստիճան նեղացնում ե»: Այստեղից Լենինն ընդհանուր յեզրակացություն ե անում, թե «վոչ մի «որենքի» և նույնիսկ հողագործության վոչ մի կարգի նալ առանձնահատկության մասին խոսք անգամ չի կարող լինել»:

Չնայած այս «որենքի» սպառիչ քննադատության, բայց և այնպես նա շարունակ մեջ ե բերվում ազրոտեխնիկական գրականության մեջ, ըստ վորում՝ դա պաշտպանող ազրոտմիներ հիմնվում են այսպիսի մոմենտների վրա. 1) բույսերի կյանքի յուրաքանչյուր առանձին ուսումնասիրվող գործոնը՝ ազոտը, ֆոսֆորը, ջուրը և այլն, ունի իր ազդեցության «ապահովումը», վորից այն կողմ բերքը կնվազի, 2) իբր թե բերքատվության աճման սահմանները պայմանավորվում են բնական որինաչափություններով:

Այսպես՝ Ա. Պ. Կրասինսկու 1930 թվին հրատարակված ձեռնարկների¹⁾ մեջ նվազող պտղաբերության «որենքը», «հողագործության որենքներից մեկն» ե անվանվում, ըստ վորում՝ հեղինակը կարծիքով «այս որենքը մեծ նշանակություն ունի գյուղատնտեսության եկոնոմիկայի մեջ»:

¹⁾ Красинский А. П. „Поле“ изд. „Раб. Просвещ.“, допущено Научно-Педагогич. секцией ГУС-а. М. 1930.

Կրաուզեյի հողի մշակութային թարգմանական դասագրքի¹⁾ մեջ խմբագրությունն առանց վորեն գիտողություն տալիս ե հեղինակի կողմից ընդունվող «նվազող պտղաբերություն որենքը» վորի առկայությունը Կրաուզեյն առաջարկում ե հաշվի առնել գործնական ձեռնարկումների ժամանակ:

«Թեորետիկ սահմանային» բերքերի հաշվարկ շատ հեղինակներ են տալիս: Մեթոդոլոգիական տեսակետով խիստ հատկանշական են դարձյալ նույն Դոյարենկոյի հաշվարկները, վորն ապացուցում ե, թե առանձին տարիներում նախկին Տիմիրյազևիյան ակադեմիայի փորձադաշտում ստացված 40 ցենտներ բերքերը Մոսկվայի շրջանի համար սահմանային են հանդիսանում: Նա ապացուցում ե այդ հետևյալ հաշվարկով, վորի մեխանիցիզմը ե վոչ գիտական լինելն ապացուցելու կարիք չի զգացվում:

40 ցենտներ հացահատիկ բերքի դեպքում կստացվի 120 ցենտներ հարդ, իսկ չոր նյութ—ընդամենը 16 տոնն: Չոր նյութի միավոր ստեղծելու համար, բույսը ծախսում ե ջրի մոտ 300 միավոր, այս պատճառով ել 16 տոնն բերքի համար՝ անհրաժեշտ ե 4,800 տոնն ջուր, իսկ դա հենց մոտավորապես կհամապատասխանի տեղումների այն քանակին, վոր ունի Մոսկվան (500 մմ.):

Այս բոլոր սխալաստիկ դատողությունները խիստ խճողում են սկսնակին, ե պետք ե դրանցով զբաղվել: Ընդհանուր ընագիտությունից հայտնի յե, վոր կենդանի որգանիզմների, այս թվում նաե բույսերի, զարգացումը կախված ե բիոլոգիական պայմանների ամբողջ կոմպլեքսից (ֆակտորներից): Բույսերի համար այսպիսի ֆակտոր եմ ջերմությունը, լույսը, ջուրը, ոդը ե մի շարք աննդատու տարրեր, ինչպես ազոտը, ֆոսֆորը, կալցիումը, մագնիսիումը, յերկաթը ե այլն: Բույսը չի կարող զարգանալ յեթե բացակայում ե այդ պայմաններից (ֆակտորներից)՝ նույն իսկ մեկը, այսպիսով դրանք բոլորը նրա համար անփոխարինելի յեն (բույսերի կյանքի ֆակտորների անփոխարինելիության ուղենքը): Բույսերի ե նրանց կյանքի առանձին ֆակտորների փոխադարձ ազդեցությունն ուսումնասիրելու՝ մի շարք հետազոտողներին (Հելիգեի, Վոյլների ե ուրիշները) հաջողվել ե հաստատել, վեր այլ ֆակտորների անփոփոխության պարագաներում մի ֆակտորի քանակապես փոխարինելու դեպքում կնկատվի մի այնպիսի ազդեցություն, թե տվյալ ֆակտորի նոր հավելումը նրվազ եֆեկտ կտա, քան նախորդ հավելումը:

¹⁾ Краузе М. - Обработка почвы как фактор урожайности, изд. Сельхозгиза, М.-Л. 1931.

Ակադեմիկոս Վ. Ռ. Վիլյամսը միանգամայն ճիշտ կերպով մատնանշում ե, վոր այս գիտողություններն այդպիսի արդյունք տվին հենց այն պատճառով, վոր տվյալ ֆակտորն ուսումնասիրվում եր այլ ֆակտորների անփոփոխության ֆոնի վրա: Յեթե, որինակ՝ բույսին տալով ջրի, ֆոսֆորի, ազոտի ե այլ նյութերի վորոշ քանակ, մենք փոփոխենք միայն ազոտի նորմաները, ապա մեզ չի կարող զարմացնել նրա մարող եֆեկտիվությունը, քանի վոր ջրի, ֆոսֆորի ե ուրիշ նյութերի նորմաները, վորոնք ոպտիմալ եյին հանդիսանում ազոտի վորոշ քանակի պայմաններում, անբավարար են դառնում ազոտի ավելացված պարարտացման պայմաններում ե դրա համար ել իջեցնում են նաե ազոտի եֆեկտիվությունը:

Ակադեմիկոս Վիլյամսն այս կետում ճիշտ կերպով սրում ե ուշադրությունն այն բանի վրա, վոր մարդ հաճախ կարող ե միանգամայն սխալ յեղրակացությունների հանգել, յեթե հաշվի չառնի, թե բույսին ֆակտորների վորոշ կամպլեքս ե հարկավոր:

Վորպես որինակ, նա բերում ե գերմանական գիտնական Վոյլների կատարած փորձի արդյունքը: Նա ուսումնասիրել ե խոնավության, լուսավորության ե պարարտացման ազդեցությունն ապակե անոթների մեջ բուսցրած աշորայի բերքի վրա:

ԱՆՈՒՆԵՐ

խոնավության տոկոսը	. 2 պարարտացված		Պարարտացված	
հաշված խոնավունակությունից . . .	20	40	60	60
Բերքն ուժեղ լուսավորության պայմաններում	110	320	403	584
» միջակ »	95	218	274	350
» թույլ »	88	185	208	223

Այստեղից պարզ յերևում ե, վոր խոնավությունն ավելացնելիս, առանց միաժամանակ պարարտացում տալու, մենք իսկապես մարվող կորագիծ ենք ստանում, բայց հենց վոր միաժամանակ ազդում ենք բոլոր ֆակտորների վրա, կորագիծն ուղվում ե ե մարման հետքն անգամ չի մնում: «Նվազող պտղաբերության որենքի» պաշտպանները յերբեմն հիմնվում են այն բանի վրա, վոր մի շարք ֆակտորների, ինչպես որինակ՝ ջերմության, նկատմամբ մենք չենք կարող դրանց ավելցուկի վնասակար ազդեցությունը վերացնել, նույնիսկ յեթե այլ ֆակտորների վրա յել ազդենք:

Ի հարկե, վորոշ ջերմության տակ բույսն ուղղակի կայրվի, սակայն դա վոչ մի կապ չունի «նվազող պտղաբերության որենքի» հետ, քանի վոր հողագործության պրոցեսում մենք հրաշարավորություն ունենք ազդելու ամենաբազմազան ֆակտոր-

ների վրա և բույսի համար առավել ցանկալի ջերմային ու-
ժիմի պայմաններում մենք կարող ենք անսահման բարձրացնել
բերքատվությունը՝ բույսի վրա ազդելով պարարտացման, ջրի և
այլ միջոցներով:

Նույն չափով եյական չեն նաև «նվազող պտղաբերություն
որենքի» մյուս «փորձնական» ապացույցները: Այսպես՝ ամերիկ-
յան տնտեսագետ Մարշալը բերում է Արկանզասի փորձակայանի
տվյալները, վորոնք ցույց են տալիս, թե հողի մշակման թիվն
ավելացնելիս՝ հողի յուրաքանչյուր մշակումն ավելի ու նվազ
եֆեկտ է տալիս: Այսպիսի որինակը, իհարկե, վոչինչ չի ա-
պացուցում: Առանց այդ պարզ է, վոր միմիայն մշակում-
ների թվի ավելացմամբ չի կարելի բերքատվությունն անսահ-
ման բարձրացնել, և վոր յեթե վարն իր նպատակին հասել է,
ապա դրա հետագա կրկնումը տեխնիկական ավելորդ ուղերա-
ցիա չէ հանդիսանում: Իսկ բերքատվության հետագա զարգաց-
ման համար պետք է պարարտացնել, լավագույն սորտեր ցանել
և այլն:

Վոչ մի արժեք չունեն նաև բերքատվության «սահմանա-
յին նորմաների» մասին յեղած դատողությունները, թե իբր այս
նորմաները մի տեղամ ընդ միշտ հաստատված են բնության
կողմից: Այս տեսակետից ինչ արժեք ունեն Դոյաբենկոյի
վերոհիշյալ հաշվարկները: Ինչպես տեսանք՝ «գերտնական» վը-
նասարարը, վորպեսզի ապացուցի, թե 40 ցենտներ հացահատիկի
բերքատվությունը Մոսկվայի շրջանում սահմանային է հանդի-
սանում, ընդունում է, վոր հացահատիկը միշտ պիտի հարաբերի
հարդին, ինչպես մեկը յերեքին, վոր չոր նյութի մի միավոր
ստեղծելու համար՝ բույսը պարտադիր կերպով պիտի 300 միա-
վոր գոլորշիացնի: Բայց չե՞ վոր մենք գիտենք, վոր և՛ առաջին,
և՛ յերկրորդ թվերը կարող են շատ լայն սահմաններում փոփոխ-
վել, վոր սելեկցիայի ոգնությունը մենք կարող ենք այնպիսի
բույսեր առաջ բերել, վորոնք ունենան մեզ հարկավոր հատկա-
նիշները: Այս պատճառով էլ այդ հաշվարկները վոչ մի արժեք
չունեն:

«Բերքատվության սահմանը» վոչ թե բնությունը, այլ ար-
տադրական ուժերի զարգացման մակարդակն է դնում: Այսպես,
30-ից ավելի տարի սրանից առաջ անգլիական նշանավոր քիմի-
կոս Կրուկար սենսացիոն ղեկուցում տվեց, վորի մեջ նա պնդում
էր, թե ազոտային պրոբլեմը ճակատագրական է հանդիսանում
մարդկության համար: Կրուկարի հաշիվներով Չիլիի սելիտրայի
(վորն այն ժամանակ հիմնական ազոտային պարարտանյութ էր)

պաշարը և նոր հողերի մշակությունը կարող էին մարդկու-
թյանն սպիտակուցով ապահովել միայն մինչև 1931 թիվը: Միակ
յեղը՝ նրա կարծիքով՝ ոգի ազոտն ոգտագործելն է:

Անցավ արդեն ճակատագրական 1931 թիվը և վոչ վոք
չմտաբերեց Կրուկարի գուշակությունը: Տեխնիկան գտավ ոգից ա-
զոտ ստանալու միջոցները: Այս մեթոդների հիման վրա կառուց-
ված է ազոտային ուժեղ արդյունաբերություն և Կրուկարի «պրոբ-
լեմը», ինչ ձևով նա յեր դրել, ուղղակի դադարել է գոյություն
ունենալուց:

Յերբեմն մատնանշում են, թե «բերքի սահմանը» բույսի
կողմից արեգակի եներգիան ոգտագործելու գործակիցն է հան-
դիսանում, բայց չե՞ վոր վոչ վոք չի ապացուցել, թե այդ մե-
ծությունն էլ անփոփոխ է բացարձակ է: Դեռ ավելին, մենք լավ
գիտենք, վոր այս գործակիցը նույնը չէ տարբեր բույսե-
րի մոտ, և յեթե բերքատվության բարձրացման մյուս բոլոր մե-
թոդներն սպառվին, բայց և այնպես կմնան այդ գործակիցը
բարձրացնելու ուղղությամբ աշխատանք կատարելու ուղիները,
թեկուզ դարձյալ նույն սելեկցիայի միջոցով:

Այս բոլոր դատողությունները, վոր հիմնված են մարդու՝
բնությանն անձնատուր լինելու վրա, միայն այն բանին են ծա-
ռայում, վոր դրանցով արդարացնեն, թե կապիտալիզմն անգոր
է բնության դեմ մղվող պայքարին: Որինակ բերենք:

Բուրժուական հայտնի տնտեսագետ Զոմբարտը, անալիզի
յենթարկելով բերքատվությունը հանքային պարարտանյութերի
սպառումը Դերմանիայում 1928—1929 թվին և այդ համեմատե-
լով նախապատերազմյան տվյալների հետ՝ յեկավ այն յեղրակա-
ցություն, վոր թեև Դերմանիան 1928—1929 թ. սկսել էր մեկ
հեկտարին ավելի հանքային պարարտանյութեր տալ, քան պա-
տերազմից առաջ, բայց նրա բերքատվությունը մինչև պատե-
րազմյան մակարդակից ցածր է: Բուրժուական պրոֆեսորի հա-
մար ամենայն ինչ պարզ է, «նվազող պտղաբերության որենքն»
է մեղավոր, ինչ կարող ենք անել: Մինչդեռ յեթե ավելի խորն
անալիզի յենթարկենք այն «միջին» տվյալները, վորոնց հետ
գործ ունի Զոմբարտը, այն ժամանակ այլ յեղրակացությունների
կհանգենք: Բանն այն է, վոր գերմանական քիմիական արդյու-
նաբերությունը յերկրի ներսում ապահովված է միայն ազոտով
(աղբյուրը ողն է) և կալիումով (Ստասֆուրտ քաղաքի մոտի խո-
շոր հանքերը): Ինչ վերաբերում է ֆոսֆորին, ապա Դերմանիայի,
առավել ֆոսֆատային գործարաններն աշխատում էյին արտասահ-

մանից ստացված հանքով, վորից զրկվել էր Գերմանիան պատերազմի ընթացքում: Դրա համար ել պատերազմի ընթացքում գերմանական դաշտերին ֆոսֆոր չէր տրվում: Պատերազմից հետո գերմանական դուղատնտեսությունն ապահովված էր ազոտով և կալիումով, իսկ 1928—1929 թվին դաշտերին ֆոսֆոր զգալի չափով ավելի քիչ էր տրված, քան պատերազմից առաջ: Գերմանական դաշտերի ֆոսֆորային «սովն» հենց հանդիսացավ այն բանի պատճառը, վոր ավելի մեծ չափով տրվող ազոտը և կալիումը, քան տրվել էր պատերազմից առաջ, հարկ չեղած եֆեկտը չտվին: Այսպիսով այդ վո՛չ թե վկայում եմ «նվազող պլուտոնիումի» որենքի» առկայության մասին, ինչպես հավատացնում է Զոմբարտը, այլ այն մասին, թե կապիտալիստական քառուրդ, կոնկրետացիան, մաքսային փակոցները (բարյերները) վոր անքակտելիորեն կապված են կապիտալիստական հասարակարգի եյուլթյան հետ, հնարավորություն չեն տալիս պլանային, գիտական հիմունքով գործադրել հանքային պարարտանյութերն այնպես, վոր ստացվի ժողովրդատնտեսական առավելագույն եֆեկտ: Մենք վճռականորեն պիտի մերժենք այս կամ այն անվան տակ «նվազող բերքատվության որենքը» ներխուժելու բոլոր փորձերը, վորպես մարքսիստական անալիզը բուրժուական սխալաստիկայով կեղծելու անպետք փորձեր:

Վերոհիշյալ բոլոր ասածներից բխում է նաև մեր մոտեցման մեթոդը դեպի ագրոտեխնիկական այս կամ այն ձեռնարկումը:

Յեթե իր ժամանակին Արեվմայան Յեվրոպայում կապիտալիստական հասարակարգը, ֆեոդալական հասարակարգին փոխարինելով՝ նախադրյալներ ստեղծեց բերքատվության զգալի աճման համար, յեթե խոշոր հողագործության մեջ գործն ամենաավանդական և ամենաանուագիտնալ, աննպատակահարմար վարելուն փոխարինեց «գիտություն գիտակցական տեխնոլոգիական կիրառումը» (Մարքս), ապա, ինչպես տեսանք, իրեն հատուկ հատկանիշների շնորհիվ՝ կապիտալիզմը նույնիսկ իր ծաղկման ժամանակաշրջանում յերբեք չի կարողացել դնել բնությունը պլանային կերպով ձևափոխելու, ագրոտեխնիկական ձեռնարկումների պլանային սխառն կառուցելու և ծավալելու խնդիրը: Կապիտալիզմը հենց իր իսկ բնույթով վո՛չ միայն վերացնում է այսպիսի պրոբլեմ՝ դնելու հնարավորությունը, այլև իրեն հատուկ բոլոր հակասություններով, վորոնք նրան տանում են դեպի կործանում և փտում, նույնիսկ չի կարող ամբողջովին ոգտագործել բուրժուական գիտության ունեցած նվաճումները:

Կապիտալիստական հողագործությունը շահագրգռված է միայն բանվորի աշխատանքից առավելագույն չափով հավելյալ արժեք ստանալու մեջ: Հողի արտադրողական ունակությունը նա գիշատի կերպով և ոգտագործում: Այս կամ այն դուղատը կամ գիտական նվաճման ոգտագործումը նպատակ ունի կապիտալիստին (կամ կապիտալիստների խմբին) առավելագույն շահույթ տալը, և վո՛չ թե ժողովրդական տնտեսությունից առավելագույն եֆեկտ ստանալը:

«Կապիտալիստական սխառնը հակադրում է ուսցիտնալ հողագործության», վորն «անհամատեղելի յե կապիտալիստական սխառնի հետ» (Մարքս):

Այս բոլոր հակամարտություններն ու հակասություններն ել ավելի սրվում են կապիտալիզմի կրիզիսի ժամանակաշրջանում, յերբ միլիոնավոր գործազուրկների չքավորության և սովի պայմաններում կապիտալիզմը չի իմանում, թե ուր պարտակի արտադրված գյուղատնտեսական մթերքները, յերբ բուրժուական պետությունները մտածում են ցանքսի տարածությունները հարկադիր կրճատելու մասին և կենսագործում են այդ մտադրությունները:

Յեթե կապիտալիստական յերկրի պայմաններում բացակայում է ագրոտեխնիկական ձեռնարկումների վորոշ սխառն, յեթե այնտեղ պարարտանյութեր, մեքենաներ և այլ միջոցներ գործադրելը կարգավորվում է շուկայի տարերքի կողմից, ապա սոցիալիստական հողագործության պայմաններում մենք պիտի գիմենք ագրոտեխնիկական ծրագրված ձեռնարկումների, յենթարկելով վերջինս սոցիալիստական շինարարության ընդհանուր խնդիրներին, ագրոտեխնիկական ձեռնարկումների այնպիսի սխառն կառուցելով, վորի մեջ յուրաքանչյուր ողակ լրացնի և ուժեղացնի մյուսին և իր հերթին լրացվի և ուժեղացվի մյուսով:

Հողի և բույսի կյանքի այդ բարդ ուրինաչափությունները, վորոնց հետ մենք պետք է գործ ունենանք, հողային և կլիմայական պայմանների բազմազանությունը, տարրեր մասնագիտացած ճյուղերի առկայությունը, տեխնիկական տարրեր զինվածությունը և գյուղատնտեսական կազմակերպչական պայմանները մեզինց մտածված վերաբերմունք են պահանջում ագրոտեխնիկական ձեռնարկումների սխառնի ծրագրման նկատմամբ՝ վորոշ մասնագիտացած շրջանի և նույնիսկ վորոշ կողմնատեսության համար: Պետք է հիշել, վոր ճշմարտության մեջ վոչինչ անշատ չի կատարվում: Յուրաքանչյուր յերևույթ ազդում է մյուսի վրա և

ընդհակառակը: Յեւ այս բազմակողմանի շարժման և փոխադարձ ազդեցութեան փաստը մոռանալու մեջ ե հենց մեծ մասամբ թաղ-նրված այն, ինչ խանգարում ե ամենահասարակ իրերը պարզ տեսնելուն»:

«Ամեն քայլափոխում մենք կամա-ակամա նկատում ենք վոր մենք վնչ մի դեպքում չենք իշխում բնութեան վրա, ինչ-պես նվաճողն իշխում ե ոտար ժողովրդի վրա, ինչպիսի վորեւե մեկը, վոր գտնվում ե բնութեանից դուրս,—վոր մենք, ընդհա-կառակը, մեր մարմնով, արյունով և ուղեղով պատկանում ենք բնութեան և գտնվում ենք նրա մեջ, վոր մեր ամբողջ տիրա-պետութեանը նրա վերաբերմամբ այն ե, վոր մենք ի տարբե-րութեան բոլոր այլ եյակներից կարողանում ենք ճիշտ հասկա-նալ և գիտենալ նրա որոնքները» (Ենպես):

Այս դրույթը հիմնավորելու համար Ենպեսը նշում ե, վոր առաջին կարգի արդյունքներից զատ, վորոնց համար մենք-անց ենք կացնում այս կամ այն ձեռնարկումը, վերջինս կարող ե յերկրորդ և յերրորդ գծի վրա տալ բոլորովին այլ, չնախա-տեսված արդյունքներ, վորոնք շատ հաճախ վռնչացնում են առաջինների նշանակութեանը: Այսպես, որինակ՝ յերբ ալպյան իտա-լացիք լեռների արևելյան լանջի փշատերև անտառները կտրատե-ցին, վորոնք այնքան խնամքով պահպանվում են հյուսիսային լանջում, նրանք չեյին նախատեսում, վոր դրանով կտրում են իրենց շրջանի անասնապահութեան արմատները: Ել ավելի նվազ չափով եյին նրանք նախատեսում, վոր դրանով նրանք տար-վա մեծ մասը զրկում են իրենց լեռնային աղբյուրները ջրից, դրա վրա ավելացրած նաև այն եֆեկտը, վոր ել ավելի կատաղի ջրի հոսանքները կվողողեն հովիտն անձրևների ժամանակա-շրջանում»:

Ենպեսի այս դրույթները մենք չպետք ե մոռացութեան տանք, հատկապես այն պատճառով, վոր գործնական աշխատանքի ընթացքում մենք հաճախ բոլորովին հաշվի չենք առնում յերկ-րորդ և յերրորդ կարգի այն հետևանքները, վորոնց մասին խո-սում ե Ենպեսը: Վորպես որինակ վերցնենք թեկուզ վերջին տարիներում մեզանում կատարվող սաղր վարը: Ճիշտ ե, դա աշ-խատանքի խնայողութեան տվից, հնարավոր դարձրեց աշխա-տանքն ավելի արագ կատարել, մեծ տարածութեաններ վարել և այլն, բայց դրա փոխարեն մշտական սաղր վարը նպաստեց մի ամբողջ շարք մոլախոտերի վիթխարի չափերով բազմացմանը:

Այն գործնական յեղրակացութեանը, վոր մենք պետք ե ա-

նենք, այն ե, վոր ագրոտեխնիկական ձեռնարկումների սխտեմ մշակելիս մենք պետք ե խիստ հաշվի առնենք հողային և կլի-մայական պայմանները: Գիտենալով, վոր մենք վճռականապես կարող ենք ձևափոխել դրանք մեզ համար ցանկալի ուղղութեամբ, միևնույն ժամանակ մենք վնչ մի բույս չպիտի մոռանանք, վոր այս ձևափոխման եֆեկտի վրեժընէն ապահովելու համար պետք ե լավ ճանաչենք հողը, լավ գիտենանք կլիման: Առանց այդ ա-մենը գիտենալու՝ մենք կուրորեն կաշխատենք, մեր ծրագրած ագրոտեխնիկական ձեռնարկումները դուրկ կլինեն գիտական հիմնավորումից:

Անցնենք այժմ այն տարրերին, վորոնք պիտի ագրոտեխ-նիկական սխտեմի բաղկացուցիչ մասերը լինեն: Մենք արդեն ընդգծեցինք, վոր նրա տեխնիկական բազան պիտի լինեն այն լծակները, վորոնց միջոցով սոցիալիստական ինդուստրիան կա-տարում ե գյուղատնտեսութեան մեջ տեխնիկական հեղափոխու-թեանը (մեխանիզացիա, քիմիզացիա, մեխորատիվ կառուցում-ների շինարարութեան, էլեկտրիֆիկացիա): Այս ձեռնարկում-ներից յուրաքանչյուրն անցկացնելը նախադրյալներ ե ստեղծում բերքատվութեան բարձրացման մեծ թուիչքների համար. նախա-դրյալներ, վորոնք մենք պետք ե ոգտագործենք: Հաճախ ըն-դունված ե ասել, թե քիմիզացիան մեծ նշանակութեան չունի հարավում, ուր վճռական դեր ե խաղում մեխանիզացիան, իսկ հյուսիսում մենք իրր հակառակ պատկեր ունենք: Այս տեսա-կետն ամբողջովին մեխանիստական ե: Սրա կողմնակիցները մո-ռանում են, վոր վոչ-սեահողային գոտու մեր խորհտնտեսու-թեանների և կոլտնտեսութեանների քիմիզացման համար մենք պարարտանյութեր տալու արտադրական բոլոր պրոցեսների մե-խանիզացիայի խիստ կարիք ենք զգում, վոր այս մեխանիզա-ցիայի բացակայութեանը հաճախ «նեղ տեղ» ե հանդիսանում և խանգարում ե աղբի, աղբանյութի և նույնիսկ հանքային պա-րարտանյութերի հարկ յեղած ոգտագործմանը: Մյուս կողմից ըն-դունված այն կարծիքը, թե հարավային հողերը պարարտացման կարիք չեն զգում, այժմ ուղղակի սխալ ե: Արդեն իսկ չխոսելով այն մասին, վոր վոռուգումից հետո յերաշտ շրջանների հողերը խիստ զգայունութեան են յերևան բերում պարարտացման նը-կատմամբ, այդ հողերը, ինչպես հետո կտեսնենք, շատ հաճախ քիմիական մեխորացիայի (հիպսացման), և հաճախ ֆոսֆորի նը-կատմամբ, նույնիսկ անջրգի հողագործութեան պայմաններում, կարիք են զգում:

99-6004-66



Ագրոտեխնիկական ձեռնարկումների սոցիալիստական սխա-
տեմը պետք է կառուցվի գյուղատնտեսություն մեջ տեխնիկան
և քիմիան առավելագույն չափով ոգտագործելու հիմքի վրա: Հո-
դի պտղաբերությունը «միշտ վորոշ հարաբերությունն է նախա-
դրում հողագործության քիմիայի և մեխանիկայի զարգացման
տվյալ մակարդակի նկատմամբ և փոխվում է զարգացման այս
մակարդակի հետ միասին» (Մարքս):

Այնուհետև ագրոտեխնիկական ձեռնարկումների սխա-
տեմը ծավալելը պահանջում է հողային տերիտորիայի գոյություն ու-
նեցող արտադրական գիմադրությունը վերացնել և ցանքաշը-
ջանառություն մտցնել: Ագրոտեխնիկական ձեռնարկումների վնչ-
ժի սխա-տեմ չի կարելի կառուցել, յեթե հայտնի չլինի, թե յու-
րաքանչյուր հողամաս ինչպե՞ս է ոգտագործվել և ինչպե՞ս պիտի
ոգտագործվի: Անհ ինչու աշխատանքի վորակի, ագրոտեխնիկայի
համար մղվող պայքարն իսկույն ևեթ ստիպեց խորհրտնտեսու-
թյուններում և կոլտնտեսություններում պարտադիր կերպով
ցանքաշըջանառության անցնելու հարցը դնել (ԽՍՀՄ-ի Հողօդ-
կոմատի կոլեգիայի 1932 թվի հունվարի 2-ի վորոշումը):

«Ագրոտեխնիկա—այդ ցանքաշըջանառություն է նշանա-
կում» (Յակովլևի):

Ցանքաշըջանառությունը, վոր իրագործում է տվյալ խորհ-
տնտեսության կամ կոլտնտեսության արտադրական մասնադի-
տացումից բղխող պլանային ժռաշարանքը, վորը կառուցված
է բոլոր բնական պայմանների և ագրոտեխնիկական պահանջների
հաշվառման վրա, հանդիսանում է այն հիմնական ֆոնը, վորի
վրա պետք է ծավալվի ագրոտեխնիկական ձեռնարկումների ա-
բողջ սխա-տեմը:

Ապա ագրոտեխնիկական ձեռնարկումների սխա-տեմում պետք
է նշվեն հողի մշակման սխա-տեմը: Հողի մշակման սխա-տեմը
հնարավորություն տալով խոնավություն պաշարելու և պահ-
պանելու, որգանական նյութի կադմալուծման ընթացքն ա-
բազացնելու և զանդաղեցնելու, մոլախոտերի դեմ կռվելու և
այն՝ զգալի չափով պայմանավորում է այն նախադրյալներն
իրագործելու հնարավորությունը, վոր կտան մեզ մեխանիզացիան
և քիմիզացիան: Հողի վատ մշակումը կուլտուրական հողագոր-
ծության ամենավտանգավոր թշնամու՝ մոլախոտերի զարգա-
ցում է առաջ բերում: Հողի դրությունից, մշակման ժամկետնե-
րից և վորակից է կախված արտադրական հետագա ոպերացիա-
ների յուրաժամանակությունը և այդ ոպերացիաների վորակը
(կոմբայնը վատ է աշխատում կեդտոտ, անհարթ դաշտում և կո-

րուստների մեծ տոկոս է տալիս): Հողի մեքենայացման մշակ-
ման միջոցների առավելագույն տիրապետմանը ձգտելով հանդերձ,
մերձագույն տարիներում չի կարելի անտեսել նաև ձիան ինվեն-
տարի ոգտագործումը: Տվյալ ետապում ձիուն թերագնահատելը
«ձախ» ցատկարում է հանդիսանում, վոր չպիտի տեղի ունենա:
Ընդհակառակը պետք է տրակտորի և ձիու աշխատանքները ճիշտ
զուգակցել կարենալ:

Յեթե հողի մշակման սխա-տեմը մեզ հնարավորություն է
տալիս ավելացնել կուլտուրական բույսերի համար անհրաժեշտ
շրի պաշարը, հնարավորություն է տալիս կարգավորել սննդա-
նյութերի այն պաշարի ոգտագործումը, վոր գտնվում է հողում
կամ մոտցվում է նրա մեջ, ապա պարարտացման սխա-տեմը նպատակ
ունի բույսերին պետք յեղած սննդանյութերն անմիջականորեն
մատակարարել (հողի միջոցով): Միաժամանակ պարարտացման
սխա-տեմի մեջ են մտնում նաև այն ձեռնարկումները, վորոնք նը-
պատակ ունեն հողի վրա քիմիական տարբեր նյութերով աղբել
նրա արտադրական կարևոր հատկությունները բարելավելու հա-
մար (քիմիական մեխորացիա): Մենք արդեն ասացինք, վոր քի-
միական արդյունաբերության աճումը՝ կոլտնտեսություններին և
խորհրտնտեսություններին հանքային պարարտանյութեր բաց
թողնելով՝ բերքատվության բարձրացումն ապահովող կարևորա-
գույն մոմենտն է հանդիսանում: Դրա համար էլ յերկրորդ հնգա-
մյակում, վորպես «կարևորագույն խնդիրներից մեկը», զբղվում է
«մեր քիմիական արդյունաբերության զարգացման և նրա ար-
մատական վերակառուցման խնդիրը, վոր ադտի, սուպերֆոսֆա-
տի և այլ պարարտանյութերի արտադրությունը, սոլիկամի ա-
ղերի ոգտագործումը և այն ընդունի այնպիսի չափեր, վորոն-
ցով հնարավոր լինի բավարարել ժողովրդատնտեսության բոլոր
պահանջները և առաջին հերթին գյուղատնտեսության պահանջը»:
Դրա համար «պարարտանյութեր արտադրելու կոդսից մենք
պետք է առաջին տեղը բռնենք վոչ միայն Յիվրոպայում, այլ և
ամբողջ աշխարհում՝ անցնելով Ամերիկայից» (Կուլբիշև): Հողա-
գործությանը վիթխարի խնդիրներ են առաջադրում 1) յուրաց-
նել հանքային պարարտանյութերի այն հսկայական քանակը,
վոր քիմիական արդյունաբերությունը կտա առաջիկա տարի-
ներում, 2) այդ պարարտանյութերը գործադրել այնպես, վոր ա-
պահովվի նրանց առավելագույն եֆեկտիվությունը: Բայց միա-
ժամանակ ագրոտեխնիկական ձեռնարկումների սխա-տեմում տեղ
պիտի գտնի նաև գոմաղբի և զանազան արտադրությունների

Թափթփուկների ոգտագործումը: Այն խոսակցությունները, թե քիմիական արտադրության աճամբը գոմաղբն այժմ արդեն կորցնում է իր նշանակությունը, մեծ սխալ է: Բացի այն, վոր գոմաղբն որգանական նյութի աղբյուրի նշանակություն ունի, յերկրորդ հնգամյակում այն դեռ ազոտի հիմնական աղբյուրը կը հանդիսանա: 1932 թվի պարարտանյութերի բալանսում հողագործությանը գոմաղբը տալիս է ամբողջ ազոտի 91,5⁰/₀-ը, ֆոսֆորի 74⁰/₀-ը և կալիումի 94,3%-ը: Նկատի ունենալով, վոր ազոտային արդյունաբերությունը յերկրորդ հնգամյակում դեռ չի կարող ապահովել հողագործության համար անհրաժեշտ ազոտի պահանջների ստացումը, շատ մեծ նշանակություն կունենա ողի ազոտի ոգտագործումը՝ ցանքաշրջանառության մեջ թիթեոնածաղիկ խոտեր (առվույտ, յերեքնուկ, իշաովույտ) մտցնելու միջոցով և վորոշ ընդեղեններ կանաչ պարարտացման համար ոգտագործելով (լուպին): Այս միաժամանակ կրարելով նաև հողի ֆիզիկական հատկությունները:

Այսուհետև մեծ նշանակություն պետք է ունենա բույսերը խնամելու սխտեմը, սկսած սերմը ցանքսի համար նախապատրաստելուց մինչև բույսերի հասունացումը: Այս սխտեմը պետք է ապահովի բույսերի լավագույն զարգացումը և նրանց կողմից այն բարենպաստ պայմանների ոգտագործումը, վոր բնականորեն են նրանց համար պարարտացումը, հողի նախորդ մշակումը և ցանքաշրջանառությունը: Այստեղ կենտրոնական տեղերից մեկը պիտի ըլնի մոլախոտերի դեմ պայքարը: Անցյալից ժառանգություն է ստացված վիթխարի չափերով մոլախոտերով վարակված դաշտեր: Վերջին տարիների ընթացքում ագրոտիսներին այլ վորոշ թերագնահատությունը, հողային տերիտորիայի դիմադրկությունը ցանքաշրջանառության բացակայությունը հետևանքով՝ մեր դաշտերը հսկայական չափերով մոլախոտեցին, մի հանգամանք, վոր հատկապես հացահատիկների նկատմամբ մի շարք շրջաններում սպառնալի չափեր է ընդունել: Սերմագոտումը, բույսի կանոնավոր խնամքը հողի կանոնավոր խնամքի հետ միասին, ցանքաշրջանառությունը պետք է ողնեն մեղ առաջիկա տարիների ընթացքում ազատվելու մոլախոտերից: Չե՞ վոր այդ մոլախոտերն ամեն տարի հողագործությունից ջրի և սննդանյութերի հսկայական քանակություններ են խլում, ամեն տարի մեզինց միլիոնավոր ցենտներ հացահատիկ և բուսական այլ տեսակի արտադրանք են խլում: Բույսը խնամելու արտադրական բոլոր պրոցեսների առավելագույն մե-

քենայացման ձգտելով հանդերձ, չի կարելի ուշադրություն չդարձնել նաև խնամքի բոլոր պարզագույն յեղանակների վրա, վոր յերբեմն կատարվում են ուղղակի ձեռքով, քանի դեռ չկան համապատասխան մեքենաներ և գործիքներ: Այսպես՝ չի կարելի հրաժարվել մի շարք կուլտուրաների (որինակ՝ վուշի և այլն) քաղհանից, քանի վոր այդ քաղհանն ապահովում է բերքատվություն համապատասխան աճումը: Ձեռնարկումների այս խմբին են պատկանում նաև բույսերի վեգետացիոն ժամանակաշրջանի կարճացման (յարովիղացիա) կամ նրանց զարգացումն ուժեղացնելու միջոցները՝ սերմերը համապատասխան մշակման ցենթարկելով կամ այլ մեթոդներով: Այլ և չպիտի անտեսել մի շարք դեռ գիտականորեն նոր մշակվող հարցեր, ինչպես որինակ՝ բուսների վրա երկաթական հոսանքով ազդելը և այլն:

Բույսերը խնամելու սխտեմի հետ անմիջական կապի մեջ են գտնվում բույսերը հիվանդություններից և վնասատուներից պաշտպանելու ձեռնարկումները: Դրանցից մեր գյուղատնտեսությունն ամեն տարի կրում է վնասներ, վորոնք առանձնապես ուժեղ աճում են վորոշ տարիներում: Կորուստների դեմ պայքարելու անհրաժեշտությունն ոտիպում է այս հարցի վրա մեծ ուշադրություն դարձնել: Այս բնագավառում մեխանիզացիան և քիմիզացիան հսկայական նշանակություն ունեն և բազմապատկում են բոլոր աշխատանքների արտադրողականությունը: Վորպես որինակ կարելի է բերել ոգանավի ոգտագործումը հիվանդությունների դեմ պայքար մղելիս՝ թույներ ցրելու համար: Միաժամանակ պիտի հիշել, վոր հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարելու գործում մեծ նշանակություն ունի նաև հողի կանոնավոր մշակությունը, բույսերի խնամքը և այլն: Առանց դրան ստեղծվում են այնպիսի պայմաններ, վորոնք բարենպաստ են հիվանդությունների և վնասատուների բազմացման համար:

Վերջապես հատուկ կերպով պետք է նշել այն ձեռնարկումների սխտեմը, վորոնց նպատակն է կուլտուրական բույսերի ժառանգական հատկությունների փոփոխությունը, նրանց այնպիսի առանձնահատկություններ տալը, վորոնք դրական դեր են խաղում արտադրական տեսակետից (բերքատվություն, դժվար թափվելը, ձմեռնադիմացկունություն, յերաշտադիմացկունություն, վնասատուներին դիմադրունակություն և այլն): Բույսերի ընտրությունը ըստ տնտեսապես ոգտակար հատկանիշների՝ տաքերայնորեն սկսել է այն ժամանակվանից, յերբ վայրի բույսերի

պատուհներ հավաքելը տեղի յն տվել հողագործութեանը: Մարքան ընդգծում է, վոր կուտուրական բույսերը, վորոնք սովորաբար «բնութեան շնորհք» են համարվում, «իրենց ժամանակակից ձև-վերով» «այն փոփոխութեաններն արդյունք» են հանդիսանում, վոր կատարվել են բազմաթիվ սերունդների գոյութեան ընթացքում, մարդու վերահսկողութեան ներքո, մարդկային ուժի միջոցով: Իսկ ժամանակակից սելեկցիան գիտակցորեն փոխում է կուտուրական բույսերի ձևերը և նույնիսկ նորերն է ստեղծում: Նոր ռորտեր առաջ բերելը (սելեկցիա), նրանց բազմացումը (սերմնաբուծութիւն), վերջապէս նրանց ռայոնացումը և պլանային մոծծումը կոլտնտեսութեանների և խորհրտնտեսութեանների պըրակտիկայի մեջ, այս բոլորը կարևորագույն ողակներ են հանդիսանում ագրոտեխնիկական ձեռնարկութեան սխտեմում: Նրանց հետ անմիջականորեն կապված են այս կամ այն շրջանում կուտուրական բույսերի վորոշ տեսակներ մտցնելը, ինչպէս որինակ՝ աշխանացան ցորենը դեպի հյուսիս բարձրացնելը, նոր տարածութեաններն յուրացումը և այլն:

Ահա դրանք են ագրոտեխնիկական ձեռնարկութեան սխտեմի այն հիմնական ողակները, վորոնք այս կամ այն ձևով պետք է իրենց արտանայութեանը գտնեն վորեւ մասնագիտացված ճյուղի, վորեն շրջանի, վորեն կոլտնտեսութեան և խորհրտնտեսութեան ագրոտեխնիկական ձեռնարկութեան սխտեմի կառուցման մեջ:

Սակայն պետք է ամենավճռական կերպով առարկել բոլոր ժամանակների, ռայոնների և մասնագիտացված տնտեսութեանների համար ագրոտեխնիկական ձեռնարկութեան ունիվերսալ մի սխտեմ՝ կառուցելու («հողագործութեան սխտեմ») սխտատիկ փորձերի դեմ: Յուրաքանչյուր մասնագիտացված տնտեսութեան, յուրաքանչյուր գոնայի մեջ պետք է գտնել այն հանգուցային ողակը, վորը տվյալ մոմենտում վճռական է հանդիսանում, վորից կաշխուղ մենք կարող ենք առաջ շարժել ամբողջ շղթան: Վորպէս որինակ կարելի յն բերել յերաշտ գոնայի հացահատիկային տնտեսութեանը: Հինգ տարի շարունակ «ցելի կողմնակիցներն» ու «խոտաղաշտի կողմնակիցները» վիճում էին այն մասին, թե ինչը կարող է այնտեղ ապահովել բարձր և՛ ֆայտուն բերքը: Յեթե «ցելի կողմնակիցները» հավատացնում էին, թե «այսպիսի միջոց և հանդիսանում մաքուր ցելը», ապա «խոտաղաշտի կողմնակիցները» յերգվում էին, թե «բաղմամյա խոտերի առաջին, ագրոտեխնիկորեն ճիշտ անցկացված կուտուրայից հետո դրան

հաջորդող միամյա կուտուրական բույսերի բերքերն առնվազն յեռապատկւում են... և միանգամայն անկախ են դառնում յերաշտից («յերաշտի մասին կոնֆերենցիայի թեզիսները»): Սակայն գործնական փորձը վորոշակիորեն ցույց տվեց, վոր յերաշտի դեմ պայքարելու հարցի բայլելիկյան լուծման հանգուցային ողակը վոչ ցելն է և վոչ ել խոտը: Կի-ի և Ժողկոմխորհի պատմական վորոշումը Զավոլժիյի վորոգման մասին՝ նշեց այն միակ ճիշտ ողին, վոր համառորեն չեյին նկատում վիճող յերկու կողմերն ել: Այսպիսի հանգուցային ողակ է հանդիսանում նաև հյուսիսային պողոտ հողերի քիմիզացիան: Այդ իհարկէ չի նշանակում, թե վոչ ցելը, վոչ խոտը նշանակութիւն չունեն յերաշտ գոնայում: Յեղ ցելը, և խոտը պետք է այնտեղ գտնեն իրենց տեղը: Բայց լոկ միայն դրանք չեն լուծում հարցը: Ազդելով մի ողակի վրա, սակայն պետք է չմոռանալ, վոր անհրաժեշտ է ագրոտեխնիկական ձեռնարկութեան ամբողջ սխտեմը կենսագործել: Ձեռնարկութեան կոմպլեքսային սխտեմի անհրաժեշտութիւնը մոռանալու հետևանքը կլինի այն, վոր կիջնի բոլոր ձեռնարկութեանների եֆեկտիվութիւնը: Այսպէս, պողոտ հողերում ֆոսֆորի և կրի պարարտացումից հացահատիկների բերքն անհամեմատ ավելի կբարձրանա, յեթե նրանք ցանվին այնպիսի ցանքաշրջանառութեան մեջ, վորտեղ կա նաև յերեքնուկ:

Կուտուրական բույսերի մշակման ընդհանուր միջոցների հետ ծանոթանալուց հետո՝ անհրաժեշտ է կանգ առնել այն առանձնահատկութեանների վրա, վոր կան հացահատիկային, տեխնիկական և կերի կուտուրական բույսերի առանձին խմբերի և տեսակների մշակման միջև: Նյութերը յուրացնելուց հետո՝ վոչ մի դեպքում դրան չի կարելի վորպէս շարժոյ մերձեանալ: Յուրաքանչյուր կոլտնտեսութեան մեջ պետք է կառուցել ագրոտեխնիկական ձեռնարկութեան ամբողջ սխտեմը: Կառուցել ագրոտեխնիկական ձեռնարկութեան միջոցները: Այս պայման-ների փոփոխութեանը (որինակ՝ տրակտորների և մեքենաների լրացուցիչ քանակ ստանալը, պլանային առաջադրանքի փոփոխութեանը, կոլտնտեսութեաններառումը ՄՏԿ-ի գործունեութեան շրջանի մեջ, ուր առաջ չեր մտել և այլն) պետք է նաև ագրոտեխնիկական ձեռնարկութեան սխտեմի փոփոխութեան առաջ բերի: Սխտեմը հաստատելուց հետո՝ պետք է վճռական պայքար մղել աշխատանքի ժամկետներն ու նորմատիվներն իրագործելու համար: Դրան մեղնում հաճախ արհամարհական վերաբերմունք

են ցույց տալիս: Ըստ պլանի, ասենք, կոլտնտեսությունը պետք է մաքուր ցել ունենա, իսկ իրականում ցելի վրա հուլիսին աճում է սերմ են տալիս մոլախոտերը, կամ ցանքաշրջանառություն մեջ շարքահերկ հողամաս ունենալ, իսկ իրականում շարքահերկ հողամասի վրա մոլախոտերն այնքան բարձրացած են լինում, վոր կոլտնտեսական բույսերը մինչև անգամ չեն յերևում, կամ գարնանացանի տարածությունը՝ ըստ պլանի՝ վորպես իրագործված է նշվում, իսկ իրականում ցանքսը վերջանում է միայն հուլիսին: Պարզ է, թե քանի վոր մենք վերջ չենք տվել այսպիսի աչքակապություն, բարձր բերք չենք ստանա: Գերմանիայում մի առած կա, թե դաշտի վորակը (մոլախոտերի նկատմամբ) վկայում է դաշտի տիրոջ վորակի մասին: Այս առածը զգալի չափով ճիշտ է: Որինակ՝ մոլախոտերը լավագույն ցուցանիշ են դեպի աշխատանքն ունեցած անխնամ վերաբերմունքի, վարի ուշացման և վատորակության, շարքահերկ կոլտնտեսների և ցելի խնամքի բացակայություն և այլն:

Ընկ. Ստալինի վեց պայմանները պարտավորեցնում են մեզ պայքարել աշխատանքի վորակի համար: Այս պայմանների հիման վրա աշխատանքը կազմակերպելով, սոցմրցման և հարվածայնության միջոցներից ոգտվելով՝ մենք կարող ենք իրացնել այն հնարավորությունները, վորը տալիս են սոցիալական նոր կարգը և բարձր տեխնիկան սոցիալիստական հողագործությունն արտադրողականությունը բարձրացնելու համար:



Հայերենի թարգմ.-խմբագիր՝ Գ Ազադնյան

Տեխ. խմբագիր՝ Պ. Սարգսյան

Սրբագրել՝ Սոս Հակոբյան

Հանձնվել է արտադրության 1933 թ. դեկտ. 10-ին

Ստորագրված է տպագրելու 1933 թ. դեկտ. 22-ին

Պատվեր № 555 Տիրած 2000 Գրավիտ 9265

ՅՆՐԵՎԱՆ, ԳՅՈՒՂՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 50

ՀՀ Ազգային գրադարան



NL0203725

30000/5

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

907

1
3

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧЕДЕНИЯ
Академии Наук
СССР



ПРОФ. Н. С. СОКОЛОВ

**Задачи земледелия накануне второй
пятилетки**

Сельхозгиз

1934

Э р и в а н ь